


1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2006թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 89602.4 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 89562.2 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 6085.7 մլն. դրամի, այլ երկրներում՝ 20967.2 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.4%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 100.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2004թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2005թ.			
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5
դեկտեմբեր	100.0	106.7	111.5
2006թ.			
հունվար	73.3	98.7	73.3
փետրվար	113.3	97.9	83.0



Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն
 ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2006թ. հունվար-փետրվարին¹

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը	89602.4	89562.2	99.4
<i>այդ թվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	22897.1	22897.1	96.1
<i>դրանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	21592.5	21592.5	97.1
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	16912.1	16912.1	92.3
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	4680.4	4680.4	119.6
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	1304.6	1304.6	81.8
հանքագործական արդյունաբերություն	14134.2	15113.6	90.9
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	13751.7	14798.0	90.0
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	382.5	315.6	139.1
մշակող արդյունաբերություն	52571.1	51551.5	102.7
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	25600.9	23731.6	123.9
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	2185.4	2545.3	114.2
մանածագործական արտադրություն	298.2	252.1	99.6
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	217.1	157.8	92.4
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	15.4	18.4	71.8
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	21.5	22.8	41.1
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	1022.5	1010.0	118.6
քիմիական արդյունաբերություն	1169.5	1760.4	77.9
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	397.5	467.7	128.8
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	1468.8	1504.4	83.3
մետաղագործական արդյունաբերություն	16425.8	15448.5	103.8
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	737.6	701.3	121.1
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	418.3	607.7	82.5
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	1056.0	1873.1	77.1
գործունեության այլ տեսակներ	1536.6	1450.4	109.4



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2006թ. հունվար-փետրվարին



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




- Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն
- 1. հիդրոէլեկտրակայաններում
- 2. ջերմաէլեկտրակայաններում
- 3. ատոմային էլեկտրակայանում
- 4. հողմային էլեկտրակայանում
- Էլեկտրաէներգիայի հաղորդում և բաշխում էլեկտրացանցերի կողմից

Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, նորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2006թ. հունվար-փետրվարին արտադրված (հաշվառվող) 112 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 59 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 63 -ից 34 -ի և սպառողական ապրանքների՝ 49 -ից 25 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-փետրվարին		Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2006	2005 ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	30589.8	25906.5	118.1
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	17946.7	17952.0	100.0
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	7430.3	2127.2	3.5 անգամ
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	5212.8	5827.3	89.5
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	1363.8	1366.5	99.8
մշակութային և տնտեսական նշանակության	3849.0	4460.8	86.3

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2005թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2006թ . զներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները¹

	2006թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	2006 թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %
Միս ² , տոննա	5978.8	5410.7	110.5
Մսամթերք, ներառյալ երչիկեղեն, տոննա	190.4	190.3	100.1
Պանիր, տոննա	1835.4	1846.5	99.4
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ² , տոննա	20619.6	19644.4	105.0
Պաղպաղակ, տոննա	3.5	4.2	83.3
Պահածո, տոննա	78.2	419.8	18.6
Սլոն, տոննա	16407.1	20137.5	81.5
Ձավարեղեն, տոննա	63.5	176.8	35.9
Հաց և հացամթերք, հազ. տոննա	49.0	49.0	100.0
Հրուշակեղեն, տոննա	581.1	491.8	118.2
Մակարոնեղեն, տոննա	398.7	357.5	111.5
Շաքարավազ, տոննա	-	237.0	-
Բուսական յուղ, տոննա	121.7	61.6	197.6
Օդի և օդու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր	1720.2	1770.1	97.2
Կոնյակ, հազ. լիտր	1625.5	406.9	4.0 անգամ
Գինի, հազ. լիտր	335.1	298.2	112.4
Շամպայն գինի, հազ. լիտր	34.5	36.6	94.3
Գարեջուր, հազ. լիտր	615.7	725.1	84.9
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	3391.0	2708.0	125.2
Բնական հյութեր, հազ. լիտր	792.8	507.5	156.2
Հանքային ջրեր, հազ. լիտր	2408.2	2719.9	88.5
Աղ, տոննա	6856.9	5667.3	121.0
Միզարետներ, մլն. հատ	386.1	353.5	109.2

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006 թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	0.2	23.7	0.8
Գորգեր և գորգեղեն, մ ²	4194	3017	139.0
Գուլպեղեն, հազ. զույգ	46.1	20.0	2.3 անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	516.0	246.3	2.1 անգամ
Կարի արտադրանք ³ , մլն. դրամ	893.1	914.9	97.6

2006թ. հունվար-փետրվարին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 88.0%-ով, լաքաներկանյութերինը՝ 10.7%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և քիմիկադեղագործական արտադրանքի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 78.5 և 9.0%-ով:

¹ Այստեղ և հետապսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

² Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	2208	1426	154.8
Ապրանքային բետոն, մ ³	7720	7551	95.6
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	20126	10925	184.2
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	21869	25700	85.1
Կիր, տոննա	1607	307	5.2 անգամ
Ցեմենտ, հազ. տոննա	31.2	39.3	79.4
Գաջ, տոննա	1200	1240	96.8
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	7818	4281	182.6
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	6045	4946	122.2

Մետաղագործական արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-փետրվարին նույն ժամանակաշրջանի համեմատությամբ մոլիբդենի խտանյութի արտադրությունն ավելացել է 45.8%-ով, ֆեռոմոլիբդենինը՝ 2.5%-ով, իսկ պղնձի խտանյութում պղնձի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 0.6 և 12.7%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	5	-	-
Ռելե, հատ	34675	24033	144.3
Ուժային ճկուն կաբելներ, կմ	21.3	0.2	106.5 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	125.1	38.1	3.3 անգամ
Էմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա	16.4	-	-
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	1015	740	137.2
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	216.7	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	585	616	95.0
Պոմպեր, հատ	36	19	189.5
Համակարգիչներ, հատ	288	420	68.6
Էլեկտրական հաշվիչներ, հատ	6748	298	22.6 անգամ
Գազային ջրատաքացուցիչներ, հատ	83	80	103.8
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	10	14	71.4
Ավտոմոբիլային մարտկոցներ, հատ	-	248	-
Ավտոգեներային սարքավորումներ, հազ. հատ	14.9	14.8	100.7
Մետաղահատ գործիքներ, հատ	31607	15158	2.1 անգամ

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-փետրվարին հանրապետությունում թողարկվել է 1144.9 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 89.8%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 1.7% -ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԷԿ-երում նվազել է, համապատասխանաբար, 25.8 և 3.0% -ով:

2006թ. հունվար-փետրվարին ՀԱԷԿ-ը թողարկել է 537.0 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 46.9% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 382.6մլն. կվտ ժամ և 33.4 %-ը, ՀԷԿ-երը՝ 224.5 մլն. կվտ ժամ և 19.6%-ը, հողմային էլեկտրակայանը՝ 0.8 մլն. կվտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-փետրվարին հանրապետությունում թողարկվել է 92.0 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 68.1%: